374 (479.25) *https://orcid.org/0000-0001-9396-0550* **DOI:10.46991/educ-21st-century.v5.i1.025**

THE PARTICIPATION IN NON-FORMAL EDUCATION ACTIVITIES AND ADAPTATION IN LABOUR MARKET OF ARMENIAN YOUTH

Marina Galstyan
Researcher, PhD student
Yerevan State University, Armenia
marina.galstyan@ysu.am

Summary

The main goal of the research is to identify what are the main social adaptation practices of the RA youth in the labor market, to what extent the participation of the youth in non-formal education contributes to the involvement in the labor market. In the post-war and post-pandemic conditions, there are still not many studies on youth employment in Armenia. The level of unemployment among Armenian youth continues to be high in Armenia, and after the pandemic and the war, it has become even worse. Non-formal education can serve as a tool to adapt to the demands of the labor market, as researches document that the connection between education and the labor market in the global world and in Armenia is broken. The analysis of the research results allows us to conclude that informal education serves to get a better job and a higher salary, but does not contribute to entering the labor market. Also, those young people who have professional education and are already involved in the labor market receive informal education. The main part of young people who have received higher education and at the same time informal education have employment, along with the growth of the basic educational level of young people and receiving informal education, the proportion of those with employment increases.

Keywords*:* Non-formal education in Armenia, education and the labor market, social adaptation of young people, unemployment of young people, employment of young people, youth independence.

УЧАСТИЕ МОЛОДЕЖИ РА В НЕФОРМАЛЬНОМ ОБРАЗОВАНИИ И АДАПТАЦИЯ НА РЫНКЕ ТРУДА

Галстян Марина
Научный сотрудник, аспирант
Ереванский государственный университет, Армения
marina.galstyan@ysu.am

Аннотация

Введение: Цель исследования – выявить, основные практики адаптации молодежи РА на рынке труда, в какой степени участие молодежи в неформальном образовании способствует вовлечению в рынок труда. В послевоенных и постпандемических условиях по-прежнему мало проводилось исследований по трудоустройству молодежи в Армении. Уровень безработицы среди армянской молодежи в Армении продолжает оставаться высоким, а после пандемии и войны положение ухудшилось. Неформальное образование может служить инструментом адаптации к требованиям рынка труда, поскольку исследования подтверждают, что связь между полученным образованием и рынком труда в глобальном мире и в Армении нарушена. Анализ результатов исследования позволяет сделать вывод, что неформальное образование может помочь получить для получения лучшей работы и более высокой зарплаты, но не способствует выходу на рынок труда. Неформальное образование получают те молодые люди, которые имеют профессиональное образование и уже вовлечены в рынок труда. Основная часть молодежи, получившей высшее и одновременно неформальное образование, трудоустроено. Наряду с ростом базового образовательного уровня молодежи и числа обучаюшихся и получающих неформальное образование увеличивается доля трудоустрокенных.

Ключевые слова: неформальное образование в Армении, образование и рынок труда, социальная адаптация молодежи, безработица среди молодежи, трудоустройство молодежи, независимость молодежи.

ՀՀ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՀԱՐՄԱՐՈՒՄԸ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ

Գալստյան Մարինա
ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի հետազոտող, հայցորդ
Հայաստան
marina.galstyan@ysu.am

Համառոտ ներածական: Հոդվածը ներկայացնում է, թե որոնք են աշխատաշուկայում ՀՀ երիտասարդների հարմարման հիմնական պրակտիկաները, որքանով է երիտասարդների մասնակցությունը ոչ ֆորմալ կրթությանը նպաստում աշխատաշուկայում նրանց ներգրավմանը: Հետպատերազմյան ու հետհամավարակային պայմաններում դեռևս շատ չեն երիտասարդների զբաղվածության վերաբերյալ ուսումնասիրությունները Հայաստանում: ՀՀ երիտասարդների գործազրկության մակարդակը շարունակում է բարձր մնալ Հայաստանում, իսկ համավարակից և պատերազմից հետո ավելի է սրվել: Ոչ ֆորմալ կրթությունը կարող է ծառայել որպես գործիք՝ հարմարվելու աշխատաշուկայի պահանջներին, քանի որ հետազոտությունները փաստում են, որ գլոբալ աշխարհում և Հայաստանում կրթության ու աշխատաշուկայի միջև կապը խզված է: Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ոչ ֆորմալ կրթությունը ծառայում է ավելի լավ աշխատանք և ավելի բարձր աշխատավարձ ստանալու համար, սակայն չի նպաստում աշխատաշուկա մուտքգործմանը: Ինչպես նաև ոչ ֆորմալ կրթություն ստանում են այն երիտասարդները, որոնք ունեն մասնագիտական կրթություն, ընդ որում՝ արդեն ներգրավված են աշխատաշուկայում: Բարձրագույն կրթություն ստացած և միևնույն ժամանակ ոչ ֆորմալ կրթություն ստացած երիտասարդների հիմնական մասը ունի զբաղվածություն. երիտասարդների հիմնական կրթական մակարդակի աճին և ոչ ֆորմալ կրթություն ստանալուն զուգահեռ ավելանում է զբաղվածություն ունեցողների համամասնությունը:

Բանալի բառեր: Ոչ ֆորմալ կրթությունը Հայաստանում, կրթություն և աշխատաշուկա, երիտասարդների սոցիալական հարմարում, երիտասարդների գործազրկություն, երիտասարդների զբաղվածություն, երիտասարդների անկախություն:

Հիմնախնդիրը: Երիտասարդների զբաղվածությունը ու գործազրկությունը արդիական խնդիր են դիտարկվում ինչպես քաղաքականություն մշակողների, այնպես էլ հետազոտողների կողմից, ընդ որում՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ գլոբալ աշխարհում: Հայաստանում երիտասարդների շուրջ մեկ երրորդը գործազուրկ է. 18-24 տարեկան երիտասարդների շրջանում գործազրկության մակարդակը 2021 թ. հասել էր մինչև 31 %: Գործազրկության մակարդակն ավելի բարձր է երիտասարդ կանանց շրջանում՝ համեմատած տարիքային նույն խմբի արական սեռի բնակչության հետ[1]: Հայաստանում երիտասարդների շրջանում գործազրկության ցածր մակարդակը խոցելի է դարձնում երիտասարդներին մի քանի հատկանիշով՝ ֆինանսական անկախության, կենցաղային անկախության և արդյունքում նաև մտավոր անկախության տեսանկյունից [5]: Իսկ անկախությունը երիտասարդների համար հիմնարար կարգավիճակ է. այն բնութագրում և սահմանում է երիտասարդությունը [3]:

[1] ՀՀ վիճակագրական կոմիտե, Աշխատանքի շուկան Հայաստանում, 2022 թ.:

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների հակիրճ վերլուծություն: Վերջին տարիներին իրականացվել են Հայաստանում երիտասարդների զբաղվածության և գործազրկության հիմնախնդրի ուսումնասիրմանն ուղղված մի շարք հետազոտություններ [2, 4, 6]: Հետազոտությունները հիմնականում անդրադառնում են գործազրկության հիմնական պատճառներին, գենդերային առանձնահատկություններին, կրթության և աշխատաշուկա կապի անհամապատասխանությանը և այլն: 2020 թ. պատերազմը և COVID-19 համավարակը էական ազդեցություն ունեցան երիտասարդների զբաղվածության վրա: 2017-2019 թթ. տնտեսապես ակտիվ երիտասարդների թիվն ուներ աճման միտում, սակայն 2020 թ. զգալի նվազում է նկատվել ինչպես 15-24, այնպես էլ 25-34 տարիքային խմբերում, ինչը կարող է բացատրվել COVID-19 համավարակի և պատերազմի հետևանքներով[1]:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է բացահայտել, թե որոնք են աշխատաշուկայում ՀՀ երիտասարդների հարմարման հիմնական պրակտիկաները, որքանով է երիտասարդների մասնակցությունը ոչ ֆորմալ կրթությանը նպաստում աշխատաշուկայում նրանց ներգրավմանը:

Հետազոտության նորույթը: Հետպատերազմյան և հետհամավարակային Հայաստանում դեռևս չեն իրականացվել երիտասարդների զբաղվածության վերաբերյալ գիտական ուսումնասիրություններ: Հետազոտությունը փորձ է՝ հասկանալու, թե պատերազմից ու համավարակից հետո ինչպես է ոչ ֆորմալ կրթությունը ազդում աշխատաշուկայում ՀՀ երիտասարդների հարմարման գործընթացների վրա:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են նպաստել Հայաստանում երիտասարդների զբաղվածության խթանմանն ուղղված պետական և զարգացման ծրագրերի հասցեականացման բարձրացմանը:

Հիմնական նյութի շարադրանքը: Երիտասարդների ոչ ֆորմալ կրթության ստացման գործընթացները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝ վարքաբանական մոդելը, որը հիմնված է փորձի վրա ուսուցմանը և բնութագրական է աշխատանքի նոր ընդունված երիտասարդների համար: Մյուս մոդելը ճանաչողականն է, որը ուղղված է երիտասարդի կողմից նոր գիտելիքների ստացմանը [1, էջ 133]: Այս երկու մոդելների նպատակն է երիտասարդին ավելի անկախ դարձնել և շարունակական կրթվող (Lifelong learner): Երիտասարդների անկախության, աշխատաշուկայում ներգրավման վրա նշանակալի ազդեցություն ունի կրթությունը, սակայն այս կապը գծային չէ, և կրթական հաջողություններ չեն երաշխավորում հաջողություններ աշխատաշուկայում [3, էջ 82]: Այս իրողությունը կարելի է նկատել նաև Հայաստանում: Մանրամասն անդրադառնանք երիտասարդների գործազրկությանը և ոչ ֆորմալ կրթությանը:

Ինչպես տեսնում ենք գծապատկերից, 2020 թ. գործազրկության բարձր ցուցանիշ նկատելի է 25-34 տարիքային խմբում և հատկապես այդ տարիքային խմբի տղամարդկանց շրջանում, իսկ 2021 թ. գործազրկության բարձր ցուցանիշ նկատելի է 15-24 տարեկան կանանց շրջանում:

[1] ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ վիճակագրական տեղեկագիրք, 2018, 2019, 2020, 2021, 2022:



Գծապատկեր 1. Երիտասարդների գործազրկությունը 2019-2021 թթ. (%)[1]

Ոչ ֆորմալ կրթությունը որպես աշխատաշուկայում ներգրավվելու և աշխատաշուկայի պահանջներին հարմարվելու միջոց է դիտարկվում երիտասարդների կողմից, քանի որ ֆորմալ կրթությունը չի հանդիսանում զբաղվածության երաշխիք: Վերջին 12 ամիսների ընթացքում հետազոտության մասնակից երիտասարդների միայն 18 % է մասնակցել որևէ ֆորմալ կրթության: Ընդ որում՝ ֆորմալ կրթությանը չմասնակցելու պատճառների ցանկում երիտասարդները նշել են, որ որակավորման կարիքը չունեն, ինչպես նաև հաճախ նշվել է նաև ֆորմալ կրթության չափազանց թանկ լինելը: Երիտասարդների միայն 11 %-ն է իր ստացած ֆորմալ կրթությունը օգտակար համարում ներկայիս աշխատանքի համար: Հետաքրքրական է, որ շուրջ 11 %-ը ոչ օգտակար է գնահատել իր ստացած կրթությունը ներկայիս աշխատանքի համար[2]: Երիտասարդների շուրջ 28 %-ը վերջին 12 ամիսների ընթացքում կրթական հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվություն է փնտրել: Ընդ որում՝ 36-64 տարիքային խմբում այդ ցուցանիշը կազմել է 16 %: Հետազոտությանը մասնակից երիտասարդների 21 %-ը նախորդ 12 ամիսների ընթացքում մասնակցել է ոչ ֆորմալ կրթական գործընթացի, 30 %-ը՝ աշխատաժողովի կամ սեմինարի, 16 %-ը՝ վերապատրաստման աշխատավայրում և 30 %-ը՝ մասնավոր դասերի: Ոչ ֆորմալ կրթական գործընթացներին մասնակցած երիտասարդների շուրջ կեսը նշել է, որ դրանք կապ են ունեցել իրենց աշխատանքի, իսկ մյուս կեսի դեպքում չեն առնչվել իրենց աշխատանքին: Հետաքրքրական է, որ երիտասարդները ոչ ֆորմալ կրթություն հիմնականում ստացել են ծառայությունների, արվեստի և կրթության ոլորտներում: Ոչ ֆորմալ կրթական գործընթացում մասնակցելու

[1] ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ վիճակագրական տեղեկագիրք, 2018, 2019, 2020, 2021, 2022

[2] Տվյալները հիմնված են «Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ» հայաստանյան գրասենյակի կողմից իրականացված «Մեծահասակների կրթությունը Հայաստանում» 2020/2021 հետազոտության շրջանակում հավաքագրված տվյալների երկրորդային ուսումնասիրության վրա, հոդվածում կիրառվել են 18-35 տարիքային խմբի վերաբերյալ տվյալների վերլուծությունը, ընտրանքի ծավալը կազմում է 18-35 տարեկան 866 երիտասարդ:

հիմնական պատճառների շարքում երիտասարդները նշել են հիմնականում նոր գիտելիք, հմտություն ստանալը իրենց հետաքրքրող ոլորտում կամ կյանքում: Այն հարցին, թե ոչ ֆորմալ կրթությանը մասնակցությունը ինչին է նպաստել, երիտասարդների հիմնական մասը նշել է՝ աշխատավայրում առաջխաղացմանը, ներկա աշխատանքի ավելի լավ կատարմանը և նոր կապերի, նոր գիտելիքի ստացմանը: Աշխատավարձի բարձրացմանն ու նոր աշխատանքի ստացմանը ոչ ֆորմալ կրթության մասնակցությունը չի նպաստել:

Ոչ ֆորմալ կրթական գործունեության մասնակցությունը պայմանավորված է մի քանի գործոններով. նախորդ կրթական մակարդակի, բնակավայրի, տարիքի, ամուսնական կարգավիճակի և զբաղվածության հետ: Հետաքրքրական է, որ ավելի բարձր կրթական մակարդակ ունեցող երիտասարդները ավելի քիչ են մասնակցում ոչ ֆորմալ կրթական գործընթացների: Գյուղական բնակավայրերի երիտասարդների մասնակցությունը ոչ ֆորմալ կրթությանը նույնպես ցածր է քաղաքաբնակների համեմատ:



Գծապատկեր 2. 30-ից հետո սովորելու նկատմամբ երիտասարդների վերաբերմունքը (%)

Կարևոր է հասկանալ նաև, թե ինչպես են երիտասարդները վերաբերվում ոչ ֆորմալ կրթական գործունեությանը, քանի որ վերաբերմունքը հիմք է համապատասխան վարքի համար: Երիտասարդների մեծամասնությունը համաձայն չէ այն դատողությանը, որ 30-ից հետո սովորելը դժվար է (56 %): Սակայն հետաքրքրական է նաև երիտասարդների մեծ մասը համաձայն է այն դատողությանը, որ 30 տարեկանից հետո կրթությունը շարունակելու համար մարդիկ զբաղված են. շուրջ 65 %-ը համաձայն է այդ դատողությանը: Միևնույն ժամանակ հարցմանը մասնակից երիտասարդների մեծ մասը կարծում է, որ մինչև 30 տարեկաններն ավելի հեշտ են յուրացնում նոր հմտություններն ու ավելի շատ են հետաքրքրված սովորելով, քան մեծահասակները (64 % և 59 %):



Գծապատկեր 3. Մեծահասակների կրթության նկատմամբ երիտասարդների վերաբերմունքը (%)

Երիտասարդների վերաբերմունքը մեծահասակների կրթությանը վերաբերյալ դրսևորվել է հետևյալ կերպ. երիտասարդների 18 %-ը կարծում է, որ միայն ավելի հարուստ մարդիկ կարող են իրենց թույլ տալ մասնակցել ֆորմալ կամ ոչ ֆորմալ վերապատրաստումների կամ մեծահասակների կրթության ծրագրերի, համեմատության համար նշենք, որ 36-64 տարիքային խմբում այս կարծիքը հանդիպել է մասնակիցների 22 %-ի մոտ: Հարցվող երիտասարդների 30 %-ը համաձայն է, որ միայն տարբեր ՀԿ-երում ներգրավվածներն ունեն մեծահասակների կրթության ծրագրերին մասնակցելու հնարավորություն: Հետազոտությանը մասնակից երիտասարդների շուրջ 53 %-ը նշել է, որ մեծահասակների կրթությանը կարող են մասնակցել միայն ազատ ժամանակ ունեցող մարդիկ:

Երիտասարդները Հայաստանում աշխատանք գտնելուն նպաստող գործոնների շարքում ավելի հաճախ նշել են հետևյալ գործոնները՝ **կրթությունը** (61 %), **աշխատասիրությունը** (38,2 %), ինչպես նաև **մասնագիտական կարողությունները և/կամ աշխատանքային փորձը** (37 %), կապերը (37 %): Երիտասարդների համեմատաբար քիչ մասն է կարծում, որ Հայաստանում լավ աշխատանք ունենալու համար առավել կարևոր գործոն է ընտանիքի պատմությունը (1,2 %), արտասահմանում ձեռք բերած կրթությունը և «ճիշտ» մարդկանց հաճոյանալը՝ համապատասխանաբար 6.8 % և 6,9 %: Հետաքրքրական է նաև, որ նույնքան երիտասարդներ կարևորում են մասնագիտական կարողությունները, փորձն ու կապերը՝ 37 %, իսկ տարիքը կարևորում է երիտասարդների 22 %-ը:

Երիտասարդները նաև նշել են, թե տարբեր նպատակադրումներին ինչպես կարող են նպաստել կրթական տարբեր գործունեությունները՝ ֆորմալ, ոչ ֆորմալ՝ նորը սովորել, ստանալ ավելի լավ աշխատանք գտնելու ավելի լավ հնարավորություն, զարգացնել պրակտիկ/գործնական հմտություններ, ապահովել աշխատանքի կայունությունը, ունենալ աշխատանքի առաջխաղացում կամ աշխատավարձի բարձրացում, ստանալ ճանաչված որակավորում, անձնական աճ ունենալ, ինչպես նաև ընդլայնել մասնագիտական ցանցը: Ոչ ֆորմալ կրթությունը գնահատվել է որպես առավել արդյունավետ գործնական հմտություններ ստանալու (52,9 %), աշխատանքի առաջխաղացում կամ աշխատավարձի բարձրացում ունենալու (34 %), նորը սովորելու (32 %), ավելի լավ

աշխատանք գտնելու ավելի լավ հնարավորություն ստանալու (31 %) համար: Ֆորմալ կրթությունը գնահատվել է որպես ավելի կարևոր գործոն մյուս նպատակների համար. երիտասարդների 60 %-ը նշել է, որ ֆորմալ կրթությունը կարևոր է աշխատանքի կայունության ապահովման համար, 47 %-ը՝ նորը սովորելու համար, 56 %-ը՝ ավելի լավ աշխատանք գտնելու ավելի լավ հնարավորության համար, իսկ 56 %-ը նշել է, որ ֆորմալ կրթությունը կարևոր է որակավորում ստանալու համար: Հետաքրքիր է, որ ինքնակրթությունը առաջնային է համարվել անձնային զարգացման/աճի տեսանկյունից. երիտասարդների շուրջ 60 %-ն է այդպես կարծում, անձնային աճի և զարգացման համար ֆորմալ և ոչ ֆորմալ կրթությունը գրեթե նույնչափ է կարևորվում երիտասարդների կողմից, այդպես է կարծում նրանց շուրջ 19 %-ը:

Պարզելու համար, թե որքանով են փոխկապված երիտասարդների կրթությունն ու զբաղվածությունը, դիտարկել ենք հետևյալ փոփոխականների միջև առկա կապը՝ խմբավորված կրթական մակարդակ և զբաղվածության առկայություն, ոչ ֆորմալ կրթություն և զբաղվածությունն ու երեք փոփոխականները միաժամանակ: Պիրսոնի խի քառակուսի[1] մեթոդով նշված փոփոխականների փոխկապվածությունը ստուգելիս նկատում ենք, որ ոչ ֆորմալ կրթություն ստացածների և չստացածների տարբերությունները զբաղվածության տեսանկյունից վիճակագրորեն նշանակալի են, հետևաբար կարող ենք ասել, որ այս երկու փոփոխականների միջև առկա է որոշակի կապ: Պիրսոնի կոռելյացիայի գործակիցը[2] ամեն դեպքում ցածր է և կազմում է 0,273: Սա նշանակում է, որ զբաղվածության առկայության և ոչ ֆորմալ կրթության միջև կա է փոքր, բայց դրական կապ: Սա մենք կարող ենք տեսնել ստորև ներկայացված գծապատկերում:



Գծապատկեր 4. Երիտասարդների բաշխումն ըստ զբաղվածության և ոչ ֆորմալ կրթության մասնակցության (%)

[1] Պիրսոնի խի քառակուսին երկու փոփոխականների միջև փոխկապվածության առկայության վիճակագրական նշանակալիության չափման միջոց է, որը թույլ է տալիս պարզել՝ արդյոք ուսումնասիրվող երևույթների միջև առկա է որևէ կապ, թե ոչ:

[2] Պիրսոնի կոռելյացիայի գործակիցը երկու փոփոխականների միջև կապի ուժգնության չափման միջոց է: Գործակիցն իր արժեքը ստանում է «-1»-ից «1» միջակայքում: Որքան գործակցի արժեքը մոտ է «1»-ին (կամ «1»-ին), այնքան կապը ուժեղ է, որքան մոտ է 0-ին, այնքան կապը թույլ է:

Ինչպես տեսնում ենք, ոչ ֆորմալ կրթություն ստացած երիտասարդների 57 %-ը զբաղվածություն ունի, իսկ չստացածների դեպքում՝ 38 %-ը: Ընդ որում՝ հատկանշական է, որքան ավելի բարձր է երիտասարդների հիմնական կրթական մակարդակը, այնքան ավելի մեծ է ոչ ֆորմալ կրթություն ստացած երիտասարդների և համապատասխանաբար զբաղվածություն ունեցողների տոկոսային բաշխվածությունը:



Գծապատկեր 5. Երիտասարդների բաշխումն ըստ զբաղվածության և ֆորմալ, ոչ ֆորմալ կրթության(%)

Ինչպես տեսնում ենք գծապատկերից, բարձրագույն կրթություն, միևնույն ժամանակ ոչ ֆորմալ կրթություն ստացած երիտասարդների 78 %-ը զբաղվածություն ունի: Ավելի հիմնական կրթական մակարդակի աճին և ոչ ֆորմալ կրթություն ստանալու հետ մեկտեղ ավելանում է զբաղվածություն ունեցողների համամասնությունը:

Եզրակացություններ: Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ոչ ֆորմալ կրթությունը նպաստող գործոն է ավելի լավ աշխատանք և ավելի բարձր աշխատավարձ ստանալու համար, սակայն այն չի նպաստում աշխատաշուկա մուտք գործելու համար: Ոչ ֆորմալ կրթություն ստանում են այն երիտասարդները, որոնք ունեն մասնագիտական կրթություն, ընդ որում՝ արդեն ներգրավված են աշխատաշուկայում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Cieslik M., Simpson D., Key concepts in Youth studies, Sage Publications, 2013.
2. Youth transition to work in Armenia, ETF, (2019), Policies supporting youth transition to work in Armenia, Azerbaijan, Belarus, Georgia, Moldova and Ukraine.
3. Furlong, A. (2009). Handbook of youth and young adulthood. Roultledge, London-New York, 2009.
4. Martin Demant Frederiksen, Signe Margrethe Thomsen & Ann Louise Slot, (2018), EU4Youth: fostering potential for greater employability: labour market analysis 2018-19.
5. Գալստյան Մ., Մասնագիտական դասընթացներին երիտասարդների մասնակցությունը որպես աշխատաշուկայի պահանջներին հարմարվելու գործիք, Երևան, 2018, http://publishing.ysu.am/files/Metsahasakneri_krtutyun.pdf [14.03.2023թ.]:

6. «Մարդկային զարգացման ազգային զեկույց 2018/2019», Ապագա ունենալու իրավունքը. Հայաստանը վերափոփոխ երիտասարդությունը, Հայաստան, 2019:

Получено: 24.03.2023 *Received: 24.03.2023*
Рассмотрено: 10.04.2023 *Reviewed: 10.04.2023*
Принято: 18.04.2023 *Accepted: 18.04.2023*

Journal ''Education in the 21st Century'', Vol1-9/1/, 2023

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Comercial 4.0 International License

378(479.25) *https://orcid.org/0000-0003-3971-3094* **DOI:10.46991/educ-21st-century.v5.i1.033**

УВЕЛИЧЕНИЕ РОЛИ СТЕЙКХОЛДЕРОВ В ПРОЦЕССЕ ПОВЫШЕНИЯ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ В АРМЕНИИ

Хачатрян Роберт
Кандидат филолог. наук, доцент,
Департамент образования и знаний Абу-Даби (ADEK),
Руководитель отдела контроля качества, Сектор высшего образования ОАЭ
robert_khachatryan@yahoo.com

Аннотация

Целью данной статьи является изучение роли участия заинтересованных сторон (стейкхолдеров) в повышении конкурентоспособности высшего образования в Армении, включая автономию в принятии решений. В статье подчеркивается важность совместных усилий заинтересованных сторон в повышении глобальной конкурентоспособности системы высшего образования. Рассматривая автономию заинтересованных сторон в принятии решений, автор статьи показывает, как совместные усилия сторон могут быть оптимизированы для повышения конкурентоспособности высшего образования в Армении, что делает его привлекательным и ценным ресурсом для различных заинтересованных сторон. Взаимодействуя с стейкхолдерами, вузы могут гарантировать, что их системы стратегического управления соответствуют государственным стратегическим приоритетам, требованиям рынка, этическим принципам. Это может привести к повышению организационной эффективности, репутации, конкурентоспособности, а также к более устойчивому развитию системы высшего образования.

Ключевые слова: стратегическое управление, участие заинтересованных сторон, конкурентоспособность высшего образования, фидуциарные функции органов принятия решений университетов, глобальное высшее образование.